

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2010թ. հոկտեմբերի 29-ին ընդունված «Կենսաբանական բազմազանության մասին կոնվենցիային կից Գենետիկական պաշարների հասանելիության և դրանց օգտագործումից ստացվող օգուտների արդար ու հավասար հիմունքներով համօգտագործման մասին» Նագոյայի արձանագրության հայերեն պաշտոնական թարգմանությունն է:



**Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարարություն**

ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ
ՄԱՍԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻՆ ԿԻՑ
ԳԵՆԵՏԻԿԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ
ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ
ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԻՑ ՍՏԱՑՎՈՂ
ՕԳՈՒՏՆԵՐԻ ԱՐԴԱՐ ՈՒ ՀԱՎԱՍԱՐ
ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ ՀԱՄՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ
ՄԱՍԻՆ ՆԱԳՈՅԱՅԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՏԵՔՍԱԸ ԵՎ ՀԱՎԵԼՎԱԾԸ



ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ
ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻՆ ԿԻՑ
ԳԵՆԵՏԻԿԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԵՎ
ԴՐԱՆՑ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԻՑ ՍՏԱՑՎՈՂ ՕԳՈՒՏՆԵՐԻ ԱՐԴԱՐ
ՈՒ ՀԱՎԱՍԱՐ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ ՀԱՄՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ
ՆԱԳՈՅԱՅԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՏԵՔՍՏԸ ԵՎ ՀԱՎԵԼՎԱԾԸ
ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ
ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆ
ՄՈՆԻՏԱԼ

Կենսաբանական բազմազանության մասին կոնվենցիա
Միավորված ազգերի կազմակերպություն



Կենսաբանական բազմազանության մասին կոնվենցիայի քարտուղարություն

Միավորված ազգերի կազմակերպության Շրջակա միջավայրի ծրագիր

413 Սեն Ժակ փողոց, Արեւմուտք, սենյակ 800

Կանադա, H2Y 1N9

Քվեբեկ, Մոնրեալ

Հեռախոս՝ +1 (514) 288 2220

Փաքս՝ +1 (514) 288 6588

Էլ. հասցե՝ secretariat@cbd.int

Կայք՝ www.cbd.int

© 2011 Կենսաբանական բազմազանության մասին կոնվենցիայի քարտուղարության կողմից

Բոլոր իրավունքները պահպանված են: Հրապարակված է 2011 թվականին

Տպագրված է Կանադայում

ISBN 92-9225-306-9

Այս հրապարակումը կարող է վերարտադրվել կրթական կամ շահույթ չհետապնդող նպատակներով՝ առանց հեղինակային իրավունքի իրավատերերի հատուկ թույլտվության՝ պայմանով, որ աղբյուրը նշված լինի: Կոնվենցիայի քարտուղարությունը երախտապարտ կլինի այն հրապարակումների պատճեններն ստանալու համար, որոնցում այս փաստաթուղթն օգտագործվում է որպես աղբյուր:

Տեղական կատալոգային գրառումը՝

Գենետիկական պաշարների հասանելիության եւ դրանց օգտագործումից ստացվող օգուտների արդար ու հավասար հիմունքներով համօգտագործման մասին Նագոյայի արձանագրություն. տեքստ եւ հավելված/ Կենսաբանական բազմազանության մասին կոնվենցիայի քարտուղարություն:

Ամփոփ նկարագիրը՝

«Սույն բուկլետը պարունակում է Կենսաբանական բազմազանության մասին կոնվենցիային կից՝ Գենետիկական պաշարների հասանելիության եւ դրանց օգտագործումից ստացվող օգուտների արդար ու հավասար հիմունքներով համօգտագործման մասին Նագոյայի արձանագրության տեքստը եւ հավելվածը»: Տրամադրված է հրատարակչի կողմից:

ISBN 92-9225-306-9

1. Կենսաբազմազանության պահպանություն՝ Իրավունք եւ օրենսդրություն 2. Գենետիկական պաշարների պահպանություն՝ Իրավունք եւ օրենսդրություն 3. Կենսաբազմազանություն՝ Միջազգային համագործակցություն 4. Կենսաբազմազանության պահպանություն I. Կենսաբանական բազմազանության մասին կոնվենցիա (1992): Արձանագրություններ եւ այլն, 29 հոկտեմբերի 2010 թվական: II. Կենսաբանական բազմազանության մասին կոնվենցիայի Կողմերի համաժողով (2010 թվական, Նագոյա, Ճապոնիա): III. Միավորված ազգերի կազմակերպություն: K3488 .A48 2011

Լրացուցիչ տեղեկատվության համար խնդրում ենք կապ հաստատել Կենսաբանական բազմազանության մասին կոնվենցիայի քարտուղարության հետ

Ներածություն

Կենսաբանական բազմազանության մասին կոնվենցիան ստորագրման համար բացվել է 1992 թվականի հունիսի 5-ին Միավորված ազգերի կազմակերպության Շրջակա միջավայրի եւ զարգացման համաժողովում (Ռիո դե Ժանեյրոյում կայացած «Երկրի գազաթնաժողով») եւ ուժի մեջ է մտել 1993 թվականի դեկտեմբերի 29-ին: Կոնվենցիան միակ միջազգային փաստաթուղթն է, որտեղ համակողմանիորեն դիտարկվում է կենսաբանական բազմազանությունը: Կոնվենցիայի երեք նպատակներն են կենսաբանական բազմազանության պահպանությունը, դրա բաղադրիչների կայուն օգտագործումը եւ գենետիկական պաշարների օգտագործումից ստացվող օգուտների արդար ու հավասար հիմունքներով համօգտագործումը:

Երրորդ նպատակի իրականացման հետագա ընթացքի համար Կայուն զարգացմանը նվիրված համաշխարհային գազաթնաժողովը (Յոհանեսբուրգ, 2002 թվականի սեպտեմբեր) կոչ արեց Կոնվենցիայի շրջանակներում մշակել միջազգային ռեժիմ՝ խթանելու եւ ապահովելու գենետիկական պաշարների օգտագործումից ստացվող օգուտների արդար ու հավասար հիմունքներով համօգտագործումը: Կոնվենցիայի Կողմերի համաժողովը դրան արձագանքեց 2004 թվականի իր յոթերորդ նիստին՝ հանձնարարելով Գենետիկական պաշարների հասանելիության եւ դրանց օգտագործումից ստացվող օգուտների արդար ու հավասար հիմունքներով համօգտագործման հարցերով իր բաց կազմով հատուկ աշխատանքային խմբին մշակել եւ համաձայնեցնել գենետիկական պաշարների հասանելիության եւ դրանց օգտագործումից ստացվող օգուտների արդար ու հավասար հիմունքներով համօգտագործման հարցերով միջազգային ռեժիմ՝ Կոնվենցիայի 15-րդ հոդվածի (Գենետիկական պաշարների հասանելիությունը) եւ 8-րդ հոդվածի «Ժ» կետի (Ավանդական գիտելիքներ) եւ դրա երեք նպատակների արդյունավետ իրականացման համար:

Վեց տարվա բանակցություններից հետո Կենսաբանական բազմազանության մասին կոնվենցիային կից՝ Գենետիկական պաշարների

հասանելիության եւ դրանց օգտագործումից ստացվող օգուտների արդար ու հավասար հիմունքներով համօգտագործման մասին Նագոյայի արձանագրությունն ընդունվեց Կողմերի համաժողովի տասներորդ նիստին՝ 2010 թվականի հոկտեմբերի 29-ին, Ճապոնիայի Նագոյա քաղաքում:

Արձանագրությունը Կոնվենցիայի երրորդ նպատակի զգալի առաջընթաց է, ինչն ապահովում է ամուր հիմք իրավական որոշակիության եւ թափանցիկության առավել բարձր աստիճանի համար ինչպես գենետիկական պաշարների մատակարարների, այնպես էլ օգտագործողների համար: Արձանագրության կարելու նորամուծություններից են գենետիկական պաշարներ տրամադրող Կողմի՝ ներպետական օրենսդրությանը կամ նորմատիվ պահանջներին համապատասխանությունն ապահովելու հատուկ պարտավորությունները եւ փոխհամաձայնեցված պայմաններում արտացոլված պայմանագրային պարտավորությունները: Համապատասխանությանն առնչվող այս դրույթները, ինչպես նաեւ այն դրույթները, որոնք սահմանում են գենետիկական պաշարների հասանելիության համար ավելի կանխատեսելի պայմաններ, կնպաստեն օգուտների արդար ու հավասար հիմունքներով համօգտագործմանը, երբ գենետիկական պաշարները դուրս բերվեն գենետիկական պաշարներ տրամադրող Կողմի տարածքից: Բացի այդ, բնիկ եւ տեղական համայնքների՝ գենետիկական պաշարներին առնչվող ավանդական գիտելիքների հասանելիության վերաբերյալ Արձանագրության դրույթները կամրապնդեն այդ համայնքների՝ իրենց գիտելիքներից, նորարարություններից եւ գործելակերպերից օգտվելու կարողությունը:

Խթանելով գենետիկական պաշարների եւ դրանց առնչվող ավանդական գիտելիքների օգտագործումը եւ ամրապնդելով դրանց օգտագործումից ստացվող օգուտների արդար ու հավասար հիմունքներով համօգտագործման հնարավորությունները՝ Արձանագրությունը խթաններ կստեղծի կենսաբանական բազմազանության պահպանման, դրա բաղադրիչների կայուն օգտագործման եւ կայուն զարգացման ու մարդկանց բարեկեցության գործում կենսաբանական բազմազանության ներդրման հետագա ընդլայնման համար:

**ԿԵՆՍԱՔԱՆԱԿԱՆ ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻՆ ԿԻՑ
ԳԵՆԵՏԻԿԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ
ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԻՑ ՍՏԱՑՎՈՂ ՕԳՈՒՏՆԵՐԻ ԱՐԴԱՐ ՈՒ ՀԱՎԱՍԱՐ
ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ ՀԱՄՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՆԱԳՈՅԱՅԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Սույն արձանագրության Կողմերը,

հանդիսանալով Կենսաբանական բազմազանության մասին կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) Կողմեր,

հիշեցնելով, որ գենետիկական պաշարների օգտագործումից ստացվող օգուտների արդար ու հավասար հիմունքներով համօգտագործումը Կոնվենցիայի երեք հիմնական նպատակներից մեկն է, եւ ընդունելով, որ սույն արձանագրությունն ուղղված է Կոնվենցիայի շրջանակներում այդ նպատակի իրականացմանը,

վերահաստատելով պետությունների ինքնիշխան իրավունքներն իրենց բնական պաշարների նկատմամբ եւ Կոնվենցիայի դրույթներին համապատասխան,

այնուհետեւ վկայակոչելով Կոնվենցիայի 15-րդ հոդվածը,

ընդունելով Կոնվենցիայի 16-րդ եւ 19-րդ հոդվածներին համապատասխան՝ զարգացող երկրներում գենետիկական պաշարների արժեւորման նպատակով գիտահետազոտական եւ նորարարական կարողությունների ստեղծման համար տեխնոլոգիաների փոխանցման եւ համագործակցության միջոցով կայուն զարգացման գործում կարեւոր ներդրումը,

ընդունելով, որ էկոհամակարգերի եւ կենսաբազմազանության տնտեսական արժեքի վերաբերյալ հասարակության իրազեկությունը եւ այդ տնտեսական արժեքի արդար ու հավասար համօգտագործումը կենսաբազմազանության

պահապանների հետ կենսաբանական բազմազանության պահպանման եւ դրա բաղադրիչների կայուն օգտագործման հիմնական խթաններն են,

հաստատելով հասանելիության եւ օգուտների համօգտագործման հավանական դերակատարումը կենսաբանական բազմազանության պահպանմանը ու կայուն օգտագործմանը, աղքատության վերացմանը եւ շրջակա միջավայրի կայունությանը նպաստելու գործում, եւ դրանով իսկ նպաստելով Հազարամյակի զարգացման նպատակների իրականացմանը,

հաստատելով կապը գենետիկական պաշարների հասանելիության եւ այդ պաշարների օգտագործումից ստացվող օգուտների արդար ու հավասար հիմունքներով համօգտագործման միջեւ,

ընդունելով գենետիկական պաշարների հասանելիության եւ դրանց օգտագործումից ստացվող օգուտների արդար ու հավասար հիմունքներով համօգտագործման առնչությամբ իրավական որոշակիություն ապահովելու կարելիությունը,

այնուհետեւ ընդունելով գենետիկական պաշարների մատակարարների եւ օգտագործողների միջեւ փոխհամաձայնեցված պայմանների շուրջ բանակցություններում հավասարության եւ արդարության խթանման կարելիությունը,

ընդունելով նաեւ կանանց կարեւոր դերը գենետիկական պաշարների հասանելիության եւ դրանց օգտագործումից ստացվող օգուտների արդար ու հավասար հիմունքներով համօգտագործման գործում եւ հաստատելով կենսաբանական բազմազանության պահպանմանն ուղղված քաղաքականության մշակման եւ իրագործման բոլոր մակարդակներում կանանց լիարժեք մասնակցության անհրաժեշտությունը,

վճռական լինելով հետագայում աջակցել Կոնվենցիայի՝ հասանելիության եւ օգուտների համօգտագործման դրույթների արդյունավետ իրականացմանը,

ընդունելով, որ անհրաժեշտ է նորարարական լուծում՝ ապահովելու այն գենետիկական պաշարների եւ գենետիկական պաշարներին առնչվող ավանդական գիտելիքների օգտագործումից ստացվող օգուտների արդար ու հավասար հիմունքներով համօգտագործումը, որոնք հանդիպում են անդրսահմանային իրավիճակներում, կամ որոնց համար հնարավոր չէ տրամադրել կամ ստանալ նախնական հիմնավորված համաձայնություն,

ընդունելով գենետիկական պաշարների կարելիությունը սննդամթերքի անվտանգության, հանրային առողջության, կենսաբազմազանության պահպանման, ինչպես նաեւ կլիմայի փոփոխության մեղմացման եւ հարմարվողականության համար,

ընդունելով գյուղատնտեսական կենսաբազմազանության յուրահատուկ բնույթը, դրա առանձնահատկությունները եւ հատուկ լուծումներ պահանջող խնդիրները,

ընդունելով բոլոր երկրների փոխկախվածությունը՝ պարենի արտադրության եւ գյուղատնտեսության վարման համար անհրաժեշտ գենետիկական պաշարների մասով, ինչպես նաեւ դրանց առանձնահատուկ բնույթն ու կարելիությունը՝ ամբողջ աշխարհում սննդամթերքի անվտանգության եւ գյուղատնտեսության կայուն զարգացման համար՝ աղքատության կրճատման եւ կլիմայի փոփոխության համատեքստում, եւ ընդունելով Պարենի արտադրության եւ գյուղատնտեսության վարման համար անհրաժեշտ բույսերի գենետիկական պաշարների մասին միջազգային պայմանագրի եւ ՊԳԿ-ի՝ պարենի արտադրության եւ գյուղատնտեսության վարման համար անհրաժեշտ գենետիկական պաշարների հարցերով հանձնաժողովի հիմնարար դերն այս առումով,

հաշվի առնելով Առողջապահության համաշխարհային կազմակերպության միջազգային առողջապահական կանոնակարգերը (2005 թվական) եւ մարդու պաթոգենների հասանելիության ապահովման կարելիությունը՝ հանրային առողջության պատրաստվածության եւ արձագանքման նպատակով,

ընդունելով այլ միջազգային ֆորումների ընթացիկ աշխատանքները՝ հասանելիության եւ օգուտների համօգտագործման առնչությամբ,

վկայակոչելով Պարենի արտադրության եւ գյուղատնտեսության վարման համար անհրաժեշտ բույսերի գենետիկական պաշարների մասին միջազգային պայմանագրով սահմանված եւ Կոնվենցիային համապատասխան մշակված՝ Հասանելիության եւ օգուտների համօգտագործման բազմակողմանի համակարգը,

ընդունելով, որ հասանելիությանը եւ օգուտների համօգտագործմանն առնչվող միջազգային փաստաթղթերը պետք է հիմնված լինեն փոխադարձ աջակցության վրա՝ Կոնվենցիայի նպատակներին հասնելու համար,

վկայակոչելով Կոնվենցիայի 8-րդ հոդվածի «Ժ» կետի կարելիությունը, քանի որ այն վերաբերում է գենետիկական պաշարներին առնչվող ավանդական գիտելիքներին եւ այդ գիտելիքների օգտագործումից ստացվող օգուտների արդար եւ հավասար հիմունքներով համօգտագործմանը,

նշելով գենետիկական պաշարների եւ ավանդական գիտելիքների փոխկապակցվածությունը, դրանց անբաժանելի բնույթը բնիկ եւ տեղական համայնքների համար, ավանդական գիտելիքների կարելիությունը կենսաբանական բազմազանության պահպանման եւ դրա բաղադրիչների կայուն օգտագործման, ինչպես նաեւ այդ համայնքների կայուն կենսապայմանների ապահովման համար,

ընդունելով այն հանգամանքների բազմազանությունը, որոնց առկայության դեպքում բնիկ եւ տեղական համայնքները տիրապետում են գենետիկ պաշարներին առնչվող ավանդական գիտելիքներին կամ սեփականացնում են դրանք,

հաշվի առնելով, որ բնիկ եւ տեղական համայնքների իրավունքն է իրենց համայնքների շրջանակներում նույնականացնել գենետիկական պաշարներին առնչվող իրենց ավանդական գիտելիքների օրինական սեփականատերերին,

այնուհետեւ ընդունելով այն եզակի հանգամանքները, որոնց առկայության դեպքում երկրներում պահպանվում են գենետիկական պաշարներին առնչվող ավանդական գիտելիքները, որոնք կարող են լինել բանավոր, փաստաթղթային կամ այլ ձեւով՝ արտացոլելով կենսաբանական բազմազանության պահպանման եւ կայուն օգտագործման համար կարեւոր նշանակություն ունեցող հարուստ մշակութային ժառանգությունը,

նշելով Միավորված ազգերի կազմակերպության՝ բնիկ ժողովուրդների իրավունքների մասին հռչակագիրը, եւ

հաստատելով, որ սույն արձանագրության մեջ ոչինչ չպետք է մեկնաբանվի որպես բնիկ եւ տեղական համայնքների առկա իրավունքների նվազեցում կամ վերացում,

համաձայնեցին հետեւյալի մասին.

Հոդված

1

ՆՊԱՏԱԿԸ

Սույն արձանագրության նպատակն է գենետիկական պաշարների օգտագործումից ստացվող օգուտների արդար ու հավասար հիմունքներով համօգտագործումը, այդ թվում՝ գենետիկական պաշարների պատշաճ հասանելիության եւ համապատասխան տեխնոլոգիաների պատշաճ փոխանցման միջոցով՝ հաշվի առնելով բոլոր իրավունքները այդ պաշարների եւ տեխնոլոգիաների նկատմամբ, ինչպես նաեւ պատշաճ ֆինանսավորման միջոցով՝ դրանով իսկ նպաստելով կենսաբանական բազմազանության պահպանմանը եւ դրա բաղադրիչների կայուն օգտագործմանը:

Հոդված

2

ԵԶՐՈՒՅԹՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

Կոնվենցիայի 2-րդ հոդվածում սահմանված եզրույթները կիրառվում են սույն արձանագրության նկատմամբ: Բացի այդ, սույն արձանագրության նպատակներով՝

ա) «Կողմերի համաժողով» նշանակում է Կոնվենցիայի Կողմերի համաժողով.

բ) «Կոնվենցիա» նշանակում է Կենսաբանական բազմազանության մասին կոնվենցիա.

գ) «գենետիկական պաշարների օգտագործում» նշանակում է գենետիկական պաշարների՝ գենետիկական եւ (կամ) կենսաքիմիական կազմի վերաբերյալ հետազոտությունների եւ մշակումների իրականացում, այդ թվում՝ Կոնվենցիայի 2-րդ հոդվածում սահմանված կենսատեխնոլոգիայի կիրառման միջոցով.

դ) «կենսատեխնոլոգիա»՝ Կոնվենցիայի 2-րդ հոդվածում սահմանված իմաստով նշանակում է տեխնոլոգիայի ցանկացած այնպիսի տեսակ, որը կապված է կենսաբանական համակարգերի, կենդանի օրգանիզմների կամ դրանց ածանցյալների օգտագործման հետ՝ հատուկ նպատակների համար ապրանքներ կամ գործընթացներ ստանալու կամ փոփոխելու նպատակով.

ե) «ածանցյալ» նշանակում է բնության մեջ հանդիպող կենսաքիմիական միացություն, որն ստացվում է կենսաբանական կամ գենետիկական պաշարների գենետիկ դրսեւորումից կամ նյութափոխանակությունից, նույնիսկ եթե այն չի պարունակում ժառանգականության ֆունկցիոնալ միավորներ:

Հոդված

3

ԿԻՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏԸ

Սույն արձանագրությունը կիրառվում է Կոնվենցիայի 15-րդ հոդվածի շրջանակներում գենետիկական պաշարների նկատմամբ եւ այդ պաշարների օգտագործումից ստացվող օգուտների նկատմամբ: Սույն արձանագրությունը կիրառվում է նաեւ Կոնվենցիայի շրջանակներում գենետիկական պաշարներին առնչվող ավանդական գիտելիքների եւ այդ գիտելիքների օգտագործումից ստացվող օգուտների նկատմամբ:

Հոդված

4

ԿԱՊԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԵՎ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԵՏ

1. Սույն արձանագրության դրույթները չեն ազդում որեւէ Կողմի՝ ցանկացած գործող միջազգային համաձայնագրից բխող իրավունքների եւ պարտավորությունների վրա՝ բացառությամբ այն դեպքերի, երբ այդ իրավունքների եւ պարտավորությունների իրականացումը կարող է լուրջ վնաս պատճառել կենսաբանական բազմազանությանը կամ սպառնալիք առաջացնել դրա համար: Սույն կետը նախատեսված չէ սույն արձանագրության եւ այլ միջազգային փաստաթղթերի միջեւ հիերարխիա սահմանելու համար:

2. Սույն արձանագրությունում ոչինչ չի խոչընդոտում Կողմերին մշակել եւ իրականացնել համապատասխան այլ միջազգային համաձայնագրեր, ներառյալ՝ հասանելիությանը եւ համօգտագործմանն առնչվող այլ հատուկ համաձայնագրեր՝ պայմանով, որ դրանք նպաստավոր են Կոնվենցիայի եւ սույն արձանագրության նպատակների համար եւ չեն հակասում դրանց:

3. Սույն արձանագրությունն իրականացվում է սույն արձանագրությանն առնչվող այլ միջազգային փաստաթղթերի հետ փոխադարձ նպաստավորության հիման վրա: Պատշաճ ուշադրություն է պետք դարձնել այդ միջազգային փաստաթղթերի եւ համապատասխան միջազգային կազմակերպությունների շրջանակներում իրականացվող օգտակար եւ արդիական ընթացիկ աշխատանքներին կամ գործելակերպերին՝ պայմանով, որ դրանք նպաստավոր են Կոնվենցիայի եւ սույն արձանագրության նպատակների համար եւ չեն հակասում դրանց:

4. Սույն արձանագրությունը Կոնվենցիայի՝ հասանելիությանը եւ համօգտագործմանն առնչվող դրույթների իրականացման փաստաթուղթն է: Այն դեպքերում, երբ կիրառվում է հասանելիությանը եւ համօգտագործմանն առնչվող հատուկ միջազգային փաստաթուղթ, որը համապատասխանում է Կոնվենցիայի եւ սույն արձանագրության նպատակներին եւ չի հակասում դրանց, սույն արձանագրությունը չի կիրառվում հատուկ փաստաթղթի Կողմի կամ Կողմերի նկատմամբ՝ հատուկ փաստաթղթում ընդգրկված հատուկ գենետիկական պաշարների եւ հատուկ փաստաթղթի նպատակների մասով:

Հոդված

5

ԳԵՆԵՏԻԿԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԻՑ ՍՏԱՑՎՈՂ ՕԳՈՒՏՆԵՐԻ ԱՐԴԱՐ ՈՒ ՀԱՎԱՍԱՐ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ ՀԱՄՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

1. Կոնվենցիայի 15-րդ հոդվածի 3-րդ եւ 7-րդ կետերի համաձայն՝ գենետիկական պաշարների օգտագործումից, ինչպես նաեւ դրանց հետագա կիրառումից եւ առետրայնացումից ստացվող օգուտներն արդար ու հավասար հիմունքներով համօգտագործվում են այդ պաշարները տրամադրող Կողմի հետ, որն այդ պաշարների ծագման երկիրն է, կամ այն Կողմի հետ, որը ձեռք է բերել գենետիկական պաշարները Կոնվենցիային համապատասխան: Այդ համօգտագործումն իրականացվում է փոխհամաձայնեցված պայմաններով:

2. Յուրաքանչյուր Կողմ, ըստ անհրաժեշտության, օրենսդրական, վարչական կամ քաղաքական միջոցներ է ձեռնարկում՝ նպատակ ունենալով ապահովել բնիկ եւ տեղական համայնքներին պատկանող գենետիկական պաշարների օգտագործումից ստացվող օգուտների արդար ու հավասար հիմունքներով համօգտագործումը շահագրգիռ համայնքների հետ՝ այդ գենետիկական պաշարների նկատմամբ այդ բնիկ եւ տեղական համայնքների սահմանված իրավունքներին առնչվող ներպետական օրենսդրությանը համապատասխան՝ հիմնված փոխհամաձայնեցված պայմանների վրա:

3. Վերը նշված 1-ին կետի իրականացման համար յուրաքանչյուր Կողմ, ըստ անհրաժեշտության, ձեռնարկում է օրենսդրական, վարչական կամ քաղաքական միջոցներ:

4. Օգուտները կարող են ներառել դրամական եւ ոչ դրամական օգուտներ՝ ներառյալ, բայց չսահմանափակվելով հավելվածում նշված օգուտներով:

5. Յուրաքանչյուր Կողմ, ըստ անհրաժեշտության, օրենսդրական, վարչական կամ քաղաքական միջոցներ է ձեռնարկում, որպեսզի գենետիկական պաշարներին առնչվող ավանդական գիտելիքների օգտագործումից ստացվող օգուտներն արդար ու հավասար հիմունքներով համօգտագործվեն այդ գիտելիքներին տիրապետող բնիկ եւ տեղական համայնքների հետ: Այդ համօգտագործումն իրականացվում է փոխհամաձայնեցված պայմաններով:

Հոդված

6

ԳԵՆԵՏԻԿԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

1. Բնական պաշարների նկատմամբ ինքնիշխան իրավունքներն իրականացնելիս եւ հասանելիության եւ օգուտների համօգտագործման մասին ներպետական օրենսդրության կամ նորմատիվ պահանջների համաձայն՝

գենետիկական պաշարների հասանելիությունը դրանց օգտագործման նպատակով ապահովվում է այդ պաշարները տրամադրող Կողմի նախնական հիմնավորված համաձայնության առկայության դեպքում, որն այդ պաշարների ծագման երկիրն է, կամ այն Կողմի նախնական հիմնավորված համաձայնության առկայության դեպքում, որը ձեռք է բերել գենետիկական պաշարները Կոնվենցիային համապատասխան, եթե այդ Կողմն այլ որոշում չի կայացնում:

2. Ներպետական օրենսդրության համաձայն՝ յուրաքանչյուր Կողմ, ըստ անհրաժեշտության, համապատասխան միջոցներ է ձեռնարկում՝ գենետիկական պաշարների հասանելիության համար բնիկ եւ տեղական համայնքների նախնական հիմնավորված համաձայնությունը կամ հավանությունն ստանալու եւ ներգրավվածությունն ապահովելու նպատակով այն դեպքերում, երբ նրանք ունեն այդ պաշարներին հասանելիություն տրամադրելու սահմանված իրավունք:

3. Վերը նշված 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր Կողմ, որը պահանջում է նախնական հիմնավորված համաձայնություն, ձեռնարկում է անհրաժեշտ օրենսդրական, վարչական կամ քաղաքական միջոցներ հետեւյալ գործողությունների համար՝

ա) ապահովել հասանելիության եւ համօգտագործման մասին իր ներպետական օրենսդրության կամ նորմատիվ պահանջների իրավական որոշակիություն, հստակություն եւ թափանցիկություն,

բ) ապահովել գենետիկական պաշարների հասանելիության արդար եւ օբյեկտիվ կանոններ եւ ընթացակարգեր,

գ) տրամադրել տեղեկատվություն նախնական հիմնավորված համաձայնության համար դիմելու վերաբերյալ,

դ) ապահովել իրավասու ազգային մարմնի կողմից հստակ եւ թափանցիկ գրավոր որոշման ընդունումը ծախսարդյունավետ ձեւով եւ ողջամիտ ժամկետում,

ե) հասանելիություն տրամադրելու պահին ապահովել թույլտվության կամ դրան համարժեք փաստաթղթի ձեւակերպումը՝ որպես նախնական հիմնավորված համաձայնություն տրամադրելու մասին որոշման եւ փոխհամաձայնեցված պայմանների սահմանման ապացույց, եւ համապատասխանաբար տեղեկացնել Հասանելիության եւ օգուտների համօգտագործման հարցերով տեղեկատվական կենտրոնին,

զ) հարկ եղած դեպքում եւ ներպետական օրենսդրության համաձայն սահմանել չափանիշներ եւ (կամ) գործընթացներ՝ գենետիկական պաշարների հասանելիության համար բնիկ եւ տեղական համայնքների նախնական հիմնավորված համաձայնությունը կամ հավանությունն ստանալու եւ ներգրավվածությունն ապահովելու համար, եւ

է) սահմանել հստակ կանոններ եւ ընթացակարգեր՝ փոխհամաձայնեցված պայմաններ պահանջելու եւ սահմանելու համար: Այդ պայմանները շարադրվում են գրավոր եւ կարող են մասնավորապես ներառել հետեւյալը՝

- i) վեճերի կարգավորման կետ,
- ii) օգուտների համօգտագործման վերաբերյալ պայմաններ, այդ թվում՝ մտավոր սեփականության իրավունքների առնչությամբ,
- iii) հետագայում երրորդ անձանց կողմից օգտագործման պայմաններ, եթե այդպիսիք կան, եւ
- iv) հարկ եղած դեպքում մտադրությունների փոփոխման պայմաններ:

Հոդված

7

ԳԵՆԵՏԻԿԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

Ներպետական օրենսդրության համաձայն՝ յուրաքանչյուր Կողմ, ըստ անհրաժեշտության, համապատասխան միջոցներ է ձեռնարկում՝ նպատակ ունենալով ապահովել, որ գենետիկական պաշարներին առնչվող այն ավանդական գիտելիքների հասանելիությունը, որոնց տիրապետում են բնիկ եւ տեղական համայնքները, ապահովվում է այդ բնիկ եւ տեղական համայնքների նախնական հիմնավորված համաձայնությամբ կամ հավանությամբ եւ ներգրավվածությամբ, եւ որ փոխհամաձայնեցված պայմանները սահմանվել են:

Հոդված

8

ՀԱՏՈՒԿ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ

Հասանելիության եւ օգուտների համօգտագործման մասին իր օրենսդրությունը կամ նորմատիվ պահանջները մշակելիս եւ իրականացնելիս յուրաքանչյուր Կողմ՝

ա) ստեղծում է պայմաններ՝ այն գիտական հետազոտությունները խթանելու եւ խրախուսելու համար, որոնք նպաստում են կենսաբանական բազմազանության պահպանմանը եւ կայուն օգտագործմանը, հատկապես զարգացող երկրներում, այդ թվում՝ ոչ առետրային հետազոտական նպատակներով հասանելիության ապահովման պարզեցված միջոցառումների միջոցով՝ հաշվի առնելով այդ հետազոտությունների նպատակների փոփոխմանն արձագանքելու անհրաժեշտությունը.

բ) պատշաճ ուշադրություն է դարձնում առկա կամ մոտալուտ արտակարգ իրավիճակների դեպքերին, որոնք սպառնում կամ վնասում են մարդկանց, կենդանիների կամ բույսերի առողջությանը, ինչպես սահմանված է ազգային կամ միջազգային մակարդակներում: Կողմերը կարող են հաշվի առնել գենետիկական պաշարների արագ հասանելիության եւ այդ գենետիկական պաշարների օգտագործումից ստացվող օգուտների արդար ու հավասար հիմունքներով արագ համօգտագործման անհրաժեշտությունը, այդ թվում՝ մատչելի օգտագործման հասանելիությունը կարիքավորների համար, հատկապես զարգացող երկրներում:

գ) հաշվի է առնում պարենի արտադրության եւ գյուղատնտեսության համար գենետիկական պաշարների կարելիությունը եւ դրանց հատուկ դերը սննդի անվտանգության համար:

Հոդված

9

ՆԵՐԴՐՈՒՄԸ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ԿԱՅՈՒՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Կողմերը խրախուսում են օգտվողներին եւ մատակարարներին գենետիկական պաշարների օգտագործումից ստացվող օգուտներն ուղղել կենսաբանական բազմազանության պահպանմանը եւ դրա բաղադրիչների կայուն օգտագործմանը:

Հոդված

10

ՕԳՈՒՏՆԵՐԻ ՀԱՄՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԳԼՈՔԱԼ ԲԱԶՄԱԿՈՂՄԱՆԻ ՄԵԽԱՆԻԶՄԸ

Կողմերը պետք է դիտարկեն օգուտների համօգտագործման գլոբալ բազմակողմանի մեխանիզմի անհրաժեշտությունն ու ձեւերը՝ ապահովելու այն

գենետիկական պաշարների եւ գենետիկական պաշարներին առնչվող ավանդական գիտելիքների օգտագործումից ստացվող օգուտների արդար ու հավասար հիմունքներով համօգտագործումը, որոնք հանդիպում են անդրսահմանային իրավիճակներում, կամ որոնց համար հնարավոր չէ տրամադրել կամ ստանալ նախնական հիմնավորված համաձայնություն: Այն օգուտները, որոնք համօգտագործվում են գենետիկական պաշարներից եւ գենետիկական պաշարներին առնչվող ավանդական գիտելիքներից օգտվողների կողմից սույն մեխանիզմի միջոցով, պետք է օգտագործվեն գլոբալ առումով կենսաբանական բազմազանության պահպանմանը եւ դրա բաղադրիչների կայուն օգտագործմանն աջակցելու նպատակով:

Հոդված

11

ԱՆԴՐՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

1. Այն դեպքերում, երբ նույն գենետիկական պաշարները տեղում հայտնաբերվում են մեկից ավելի Կողմերի տարածքում, այդ Կողմերը պետք է ձգտեն անհրաժեշտության դեպքում համագործակցել՝ ներգրավելով համապատասխան շահագրգիռ բնիկ եւ տեղական համայնքները՝ սույն արձանագրությունն իրականացնելու նպատակով:

2. Այն դեպքերում, երբ գենետիկական պաշարներին առնչվող նույն ավանդական գիտելիքները համօգտագործվում են մի քանի Կողմերի մեկ կամ մի քանի բնիկ եւ տեղական համայնքների կողմից, այդ Կողմերը պետք է ձգտեն անհրաժեշտության դեպքում համագործակցել՝ ներգրավելով շահագրգիռ բնիկ եւ տեղական համայնքները՝ սույն արձանագրությունն իրականացնելու նպատակով:

Հոդված

12

ԳԵՆԵՏԻԿԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ

1. Սույն արձանագրությամբ սահմանված իրենց պարտավորությունները կատարելիս Կողմերը, ներպետական օրենսդրության համաձայն, հաշվի են առնում բնիկ եւ տեղական համայնքների սովորությանին իրավունքները, համայնքային աշխատակարգերը եւ ընթացակարգերը գենետիկական պաշարներին առնչվող ավանդական գիտելիքների վերաբերյալ:

2. Կողմերը, շահագրգիռ բնիկ եւ տեղական համայնքների արդյունավետ մասնակցությամբ, մեխանիզմներ են ստեղծում գենետիկական պաշարներին առնչվող ավանդական գիտելիքների պոտենցիալ օգտագործողներին իրենց պարտավորությունների մասին տեղեկացնելու համար, այդ թվում՝ այն միջոցների մասին, որոնք Հասանելիության եւ օգուտների համօգտագործման հարցերով տեղեկատվական կենտրոնի միջոցով մատչելի են դարձրել այդ գիտելիքների հասանելիությունը եւ դրանց օգտագործումից ստացվող օգուտների արդար ու հավասար հիմունքներով համօգտագործումը:

3. Կողմերը ձգտում են անհրաժեշտության դեպքում աջակցել բնիկ եւ տեղական համայնքների, այդ թվում՝ այդ համայնքներում կանանց կողմից հետեւյալի մշակմանը՝

ա) համայնքային աշխատակարգեր, որոնք վերաբերում են գենետիկական պաշարներին առնչվող ավանդական գիտելիքների հասանելիությանը եւ այդ գիտելիքների օգտագործումից ստացվող օգուտների արդար ու հավասար համօգտագործմանը,

բ) գենետիկական պաշարներին առնչվող ավանդական գիտելիքների օգտագործումից ստացվող օգուտների արդար ու հավասար համօգտագործումն ապահովելու համար փոխհամաձայնեցված պայմաններին ներկայացվող նվազագույն պահանջներ, եւ

գ) գենետիկական պաշարներին առնչվող ավանդական գիտելիքների օգտագործումից ստացվող օգուտների համօգտագործման վերաբերյալ պայմանագրի տիպային դրույթներ:

4. Կողմերը սույն արձանագրությունն իրականացնելիս հնարավորինս չեն սահմանափակում գենետիկական պաշարների եւ դրանց առնչվող ավանդական գիտելիքների սովորույթային օգտագործումը եւ դրանց փոխանակումը բնիկ ու տեղական համայնքների շրջանակներում եւ միմյանց միջեւ՝ Կոնվենցիայի նպատակներին համապատասխան:

Հոդված

13

ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԸ ԵՎ ԻՐԱՎԱՍՈՒ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

1. Յուրաքանչյուր Կողմ նշանակում է հասանելիության եւ օգուտների համօգտագործման ազգային համակարգող կենտրոն: Ազգային համակարգող կենտրոնը պետք է տրամադրի հետեւյալ տեղեկատվությունը.

ա) գենետիկական պաշարների հասանելիության թույլտվության համար դիմողներին՝ նախնական հիմնավորված համաձայնություն ստանալու եւ փոխհամաձայնեցված պայմաններ սահմանելու ընթացակարգերի, այդ թվում՝ օգուտների համօգտագործման վերաբերյալ տեղեկատվություն,

բ) գենետիկական պաշարներին առնչվող ավանդական գիտելիքների հասանելիության թույլտվության համար դիմողներին՝ բնիկ եւ տեղական համայնքների նախնական հիմնավորված համաձայնությունը կամ հավանությունն ստանալու եւ անհրաժեշտության դեպքում ներգրավվածությունն ապահովելու եւ փոխհամաձայնեցված պայմաններ սահմանելու ընթացակարգերի, այդ թվում՝ օգուտների համօգտագործման վերաբերյալ տեղեկատվություն, եւ

գ) իրավասու ազգային մարմինների, համապատասխան բնիկ եւ տեղական համայնքների եւ համապատասխան շահագրգիռ կողմերի վերաբերյալ տեղեկատվություն:

Ազգային համակարգող կենտրոնը պատասխանատու է քարտուղարության հետ փոխգործակցության համար:

2. Յուրաքանչյուր Կողմ նշանակում է հասանելիության եւ օգուտների համօգտագործման հարցերով մեկ կամ մի քանի իրավասու ազգային մարմիններ: Իրավասու ազգային մարմինները, համաձայն կիրառելի ազգային օրենսդրական, վարչական կամ քաղաքական միջոցների, պատասխանատու են հասանելիություն ապահովելու կամ, կախված հանգամանքներից, գրավոր ապացույցներ տրամադրելու համար առ այն, որ հասանելիության ապահովման պահանջները բավարարվել են, ինչպես նաեւ պատասխանատու են նախնական հիմնավորված համաձայնություն ստանալու եւ փոխհամաձայնեցված պայմաններ սահմանելու նպատակով կիրառելի ընթացակարգերի եւ պահանջների վերաբերյալ խորհրդատվություն տրամադրելու համար:

3. Կողմը կարող է նշանակել մեկ միասնական մարմին՝ ինչպես համակարգող կենտրոնի, այնպես էլ իրավասու ազգային մարմնի գործառույթներն իրականացնելու համար:

4. Յուրաքանչյուր Կողմ իր համար սույն արձանագրությունն ուժի մեջ մտնելու օրվանից ոչ ուշ ծանուցում է Քարտուղարությանը իր ազգային համակարգող կենտրոնի եւ իր իրավասու ազգային մարմնի կամ մարմինների կոնտակտային տվյալների մասին: Եթե Կողմը նշանակում է մեկից ավելի իրավասու ազգային մարմին, ապա այդ մասին ծանուցելու հետ մեկտեղ Քարտուղարություն է ուղարկում այդ մարմինների համապատասխան պարտականությունների մասին համապատասխան տեղեկատվություն: Այն դեպքում, երբ դա կիրառելի է, այդ տեղեկատվությունը պետք է առնվազն պարզաբանի, թե որ իրավասու մարմինն է պատասխանատու պահանջվող

գենետիկական պաշարների համար: Յուրաքանչյուր Կողմ անհապաղ տեղեկացնում է Քարտուղարությանը իր ազգային համակարգող կենտրոնի նշանակման կամ իր իրավասու ազգային մարմնի կամ մարմինների կոնտակտային տվյալների կամ պարտականությունների ցանկացած փոփոխության մասին:

5. Քարտուղարությունը հասանելի է դարձնում վերը նշված 4-րդ կետի համաձայն ստացված տեղեկատվությունը Հասանելիության եւ օգուտների համօգտագործման հարցերով տեղեկատվական կենտրոնի միջոցով:

Հոդված

14

ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԵՎ ՕԳՈՒՏՆԵՐԻ ՀԱՄՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԸ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆԱԿՈՒՄԸ

1. Սույնով ստեղծվում է Հասանելիության եւ օգուտների համօգտագործման հարցերով տեղեկատվական կենտրոն՝ որպես Կոնվենցիայի 18-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված միջնորդական մեխանիզմի մաս: Այն ծառայում է որպես հասանելիությանը եւ օգուտների համօգտագործմանն առնչվող տեղեկատվության փոխանակման միջոց: Մասնավորապես այն ապահովում է սույն արձանագրության իրականացմանն առնչվող յուրաքանչյուր Կողմի տրամադրած տեղեկատվության հասանելիությունը:

2. Չխախտելով գաղտնի տեղեկատվության պաշտպանությունը՝ յուրաքանչյուր Կողմ Հասանելիության եւ օգուտների համօգտագործման հարցերով տեղեկատվական կենտրոնին է տրամադրում սույն արձանագրությամբ պահանջվող ցանկացած տեղեկատվություն, ինչպես նաեւ որպես սույն արձանագրության Կողմերի խորհրդաժողով հանդես եկող Կողմերի համաժողովի կողմից ընդունված որոշումների համաձայն պահանջվող տեղեկատվություն: Տեղեկատվությունը ներառում է հետեւյալը.

ա) օրենսդրական, վարչական եւ քաղաքական միջոցներ՝ հասանելիության եւ օգուտների համագտագործման մասով.

բ) ազգային համակարգող կենտրոնի եւ իրավասու ազգային մարմնի կամ մարմինների վերաբերյալ տեղեկատվություն, եւ

գ) հասանելիություն տրամադրելու պահին որպես նախնական հիմնավորված համաձայնություն տրամադրելու մասին որոշման եւ փոխհամաձայնեցված պայմանների սահմանման ապացույց տրված թույլտվություններ կամ դրանց համարժեք փաստաթղթեր:

3. Լրացուցիչ տեղեկությունները, եթե առկա են եւ ըստ անհրաժեշտության, կարող են ներառել հետեւյալը.

ա) բնիկ եւ տեղական համայնքների համապատասխան իրավասու մարմինների վերաբերյալ տեղեկատվություն, ինչպես նաեւ ընդունված որոշման համաձայն տրամադրվող տեղեկատվություն,

բ) պայմանագրի տիպային դրույթներ,

գ) գենետիկական պաշարների մոնիթորինգի համար մշակված մեթոդներ ու գործիքներ, եւ

դ) վարքագծի կանոններ եւ լավագույն գործելակերպեր:

4. Հասանելիության եւ օգուտների համագտագործման տեղեկատվական կենտրոնի աշխատանքի կատարման ձեւերը, այդ թվում՝ դրա գործունեության մասին հաշվետվությունները, քննարկվում եւ ընդունվում են որպես սույն արձանագրության Կողմերի խորհրդաժողով հանդես եկող Կողմերի համաժողովի կողմից՝ իր առաջին նիստին, եւ վերահսկվում են այդ պահից ի վեր:

Հոդված

15

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԵՎ ՕԳՈՒՏՆԵՐԻ ՀԱՄՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆԸ ԿԱՄ ՆՈՐՄԱՏԻՎ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ

1. Յուրաքանչյուր Կողմ ձեռնարկում է պատշաճ, արդյունավետ եւ համաչափ օրենսդրական, վարչական կամ քաղաքական միջոցներ՝ ապահովելու, որ իր իրավասության սահմաններում օգտագործվող գենետիկական պաշարները հասանելի լինեն նախնական հիմնավորված համաձայնությանը համապատասխան, եւ որ սահմանվեն փոխհամաձայնեցված պայմաններ, ինչպես պահանջվում է մյուս Կողմի հասանելիության եւ օգուտների համօգտագործման վերաբերյալ ներպետական օրենսդրությամբ կամ նորմատիվ պահանջներով:

2. Կողմերը ձեռնարկում են պատշաճ, արդյունավետ եւ համաչափ միջոցներ՝ վերը նշված 1-ին կետի համաձայն ընդունված միջոցների անհամապատասխանության հետ կապված իրավիճակները կարգավորելու համար:

3. Կողմերը հարկ եղած դեպքում եւ հնարավորինս համագործակցում են վերոհիշյալ 1-ին կետում նշված՝ հասանելիության եւ օգուտների համօգտագործման վերաբերյալ ներպետական օրենսդրության կամ նորմատիվ պահանջների ենթադրյալ խախտման դեպքերում:

Հոդված

16

ԳԵՆԵՏԻԿԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՄԱՍՈՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԵՎ ՕԳՈՒՏՆԵՐԻ ՀԱՄՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆԸ ԿԱՄ ՆՈՐՄԱՏԻՎ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ

1. Յուրաքանչյուր Կողմ հարկ եղած դեպքում ձեռնարկում է պատշաճ, արդյունավետ եւ համաչափ օրենսդրական, վարչական կամ քաղաքական միջոցներ՝ ապահովելու, որ իր իրավասության սահմաններում օգտագործվող գենետիկական պաշարներին առնչվող ավանդական գիտելիքները հասանելի լինեն բնիկ եւ տեղական համայնքների նախնական հիմնավորված համաձայնությանը կամ հավանությանը եւ ներգրավվածությանը համապատասխան, եւ որ սահմանվեն փոխհամաձայնեցված պայմաններ, ինչպես պահանջվում է այն մյուս Կողմի գենետիկական պաշարների հասանելիության եւ օգուտների համագտագործման վերաբերյալ ներպետական օրենսդրությամբ կամ նորմատիվ պահանջներով, որտեղ գտնվում են այդ բնիկ եւ տեղական համայնքները:

2. Յուրաքանչյուր Կողմ ձեռնարկում է պատշաճ, արդյունավետ եւ համաչափ միջոցներ՝ վերը նշված 1-ին կետի համաձայն ընդունված միջոցների անհամապատասխանության հետ կապված իրավիճակները կարգավորելու համար:

3. Կողմերը հարկ եղած դեպքում եւ հնարավորինս համագործակցում են վերոհիշյալ 1-ին կետում նշված՝ հասանելիության եւ օգուտների համագտագործման վերաբերյալ ներպետական օրենսդրության կամ նորմատիվ պահանջների ենթադրյալ խախտման դեպքերում:

Հոդված

17

ԳԵՆԵՏԻԿԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

1. Համապատասխանությունն ապահովելու նպատակով յուրաքանչյուր Կողմ համապատասխան միջոցներ է ձեռնարկում՝ գենետիկական պաշարների օգտագործման մոնիթորինգի իրականացման եւ թափանցիկության բարձրացման համար: Այդ միջոցները ներառում են հետեւյալը.

ա) մեկ կամ մի քանի անցակետեր նշելը հետեւյալ կերպ.

i) նշված անցակետերը, կախված հանգամանքներից, կհավաքեն կամ կստանան համապատասխան տեղեկատվություն նախնական հիմնավորված համաձայնության, գենետիկական պաշարի աղբյուրի, փոխհամաձայնեցված պայմանների սահմանման եւ (կամ) գենետիկական պաշարների օգտագործման վերաբերյալ.

ii) յուրաքանչյուր Կողմ, ըստ անհրաժեշտության եւ կախված նշված անցակետի առանձնահատկություններից, գենետիկական պաշարներ օգտագործողներից պահանջում է վերոնշյալ կետում նշված տեղեկատվությունը տրամադրել նշված անցակետում: Յուրաքանչյուր Կողմ ձեռնարկում է պատշաճ, արդյունավետ եւ համաչափ միջոցներ՝ անհամապատասխանության հետ կապված իրավիճակները կարգավորելու համար.

iii) այդ տեղեկատվությունը, այդ թվում՝ միջազգայնորեն ճանաչված համապատասխանության հավաստագրերից ստացված տեղեկատվությունը, դրանց առկայության դեպքում, առանց գաղտնի տեղեկատվության պաշտպանությունը խաթարելու, կտրամադրվի համապատասխան ազգային մարմիններին, նախնական հիմնավորված համաձայնություն տրամադրող Կողմին եւ Հասանելիության եւ օգուտների համօգտագործման հարցերով տեղեկատվական կենտրոնին՝ կախված հանգամանքներից.

v) անցակետերը պետք է լինեն արդյունավետ եւ իրականացնեն համապատասխան գործառույթներ՝ սույն «ա» ենթակետի իրագործման նպատակով: Դրանք պետք է համապատասխանեն գենետիկական պաշարների օգտագործմանը կամ համապատասխան տեղեկատվության հավաքագրմանը, մասնավորապես՝ հետազոտության, մշակման, նորարարության, նախաառեւտրայինացման կամ առեւտրայինացման ցանկացած փուլում:

բ) գենետիկական պաշարներ օգտագործողներին եւ մատակարարներին խրախուսել, որ փոխհամաձայնեցված պայմաններում ընդգրկվեն այդ պայմանների իրականացման վերաբերյալ տեղեկատվության փոխանակման մասով դրույթներ, այդ թվում՝ հաշվետվությանը ներկայացվող պահանջների միջոցով, եւ

գ) խրախուսել հաղորդակցման ծախսարդյունավետ միջոցների եւ համակարգերի օգտագործումը:

2. 6-րդ հոդվածի 3-րդ կետի «ե» ենթակետի համաձայն ձեակերպված եւ Հասանելիության եւ օգուտների համօգտագործման հարցերով տեղեկատվական կենտրոնին տրամադրված թույլտվությունը կամ դրան համարժեք փաստաթուղթը միջազգայնորեն ճանաչված համապատասխանության հավաստագիրն է:

3. Միջազգայնորեն ճանաչված համապատասխանության հավաստագիրը ծառայում է որպես ապացույց առ այն, որ այն գենետիկական պաշարը, որի վրա տարածվում է դրա գործողությունը, հասանելի է նախնական հիմնավորված համաձայնությանը համապատասխան, եւ որ սահմանվել են փոխհամաձայնեցված պայմաններ, ինչպես պահանջվում է նախնական հիմնավորված համաձայնություն տրամադրող Կողմի գենետիկական պաշարների հասանելիության եւ օգուտների համօգտագործման ներպետական օրենսդրությամբ կամ նորմատիվ պահանջներով:

4. Միջազգայնորեն ճանաչված համապատասխանության հավաստագիրը պետք է պարունակի հետեւյալի վերաբերյալ նվազագույն տեղեկատվությունը, եթե այն գաղտնի չէ՝

- ա) հավաստագիրը տրամադրող մարմինը,
- բ) տրամադրման ամսաթիվը,
- գ) մատակարարի անունը,
- դ) հավաստագրի եզակի նույնականացուցիչը,
- ե) այն ֆիզիկական կամ իրավաբանական անձը, որին տրվել է նախնական հիմնավորված համաձայնությունը,
- զ) այն գենետիկական պաշարները կամ դրանց առնչվող օբյեկտները, որոնց վրա տարածվում է հավաստագրի գործողությունը,
- է) փոխհամաձայնեցված պայմանների սահմանման հաստատումը,
- ը) նախնական հիմնավորված համաձայնության ստացման հաստատումը, եւ
- զ) օգտագործման տեսակը՝ առետրային եւ (կամ) ոչ առետրային:

Հոդված

18

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՆ

1. 6-րդ հոդվածի 3-րդ կետի «է» (i) ենթակետը եւ 7-րդ հոդվածն իրականացնելիս յուրաքանչյուր Կողմ խրախուսում է գենետիկական պաշարների եւ (կամ) գենետիկական պաշարներին առնչվող ավանդական գիտելիքների մատակարարներին եւ օգտագործողներին փոխհամաձայնեցված պայմաններում անհրաժեշտության դեպքում ընդգրկել վեճերի լուծմանն առնչվող դրույթներ, այդ թվում՝

- ա) այն իրավագործությունը, որին կփոխանցվի վեճերի լուծման ցանկացած գործընթաց,
- բ) կիրառելի օրենսդրությունը, եւ (կամ)

գ) վեճերի այլընտրանքային լուծման տարբերակներ, ինչպիսիք են միջնորդությունը կամ արբիտրաժը:

2. Փոխհամաձայնեցված պայմաններից բխող վեճերի առաջացման դեպքում յուրաքանչյուր Կողմ ապահովում է իր իրավական համակարգի շրջանակներում փոխհատուցում պահանջելու հնարավորություն՝ համաձայն կիրառելի իրավագործության պահանջների:

3. Յուրաքանչյուր Կողմ համապատասխան արդյունավետ միջոցներ է ձեռնարկում հետեւյալի առնչությամբ.

ա) հասանելիություն արդարադատությանը, եւ

բ) օտարերկրյա դատական եւ արբիտրաժային վճիռների փոխադարձ ճանաչման եւ կատարման մեխանիզմների օգտագործում:

4. Սույն հոդվածի արդյունավետությունը վերանայվում է որպես սույն արձանագրության Կողմերի խորհրդաժողով հանդես եկող Կողմերի համաժողովի կողմից՝ սույն արձանագրության 31-րդ հոդվածին համապատասխան:

Հոդված

19

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՏԻՊԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

1. Յուրաքանչյուր Կողմ, ըստ անհրաժեշտության, խրախուսում է ոլորտային եւ միջոլորտային պայմանագրերի տիպային դրույթների մշակումը, թարմացումը եւ օգտագործումը փոխհամաձայնեցված պայմանների շրջանակներում:

2. Որպես սույն արձանագրության Կողմերի խորհրդաժողով հանդես եկող Կողմերի համաժողովը պարբերաբար իրականացնում է ոլորտային եւ միջոլորտային պայմանագրերի տիպային դրույթների օգտագործման գնահատում:

Հոդված

20

**ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ, ՈՒՂԵՑՈՒՅՑՆԵՐԸ ԵՎ ԼԱՎԱԳՈՒՅՆ
ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊԵՐԸ ԵՎ (ԿԱՄ) ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԸ**

1. Յուրաքանչյուր Կողմ, ըստ անհրաժեշտության, խրախուսում է կամավոր վարքագծի կանոնների, ուղեցույցների եւ լավագույն գործելակերպերի եւ (կամ) ստանդարտների մշակումը, թարմացումը եւ օգտագործումը՝ հասանելիության եւ օգուտների համօգտագործման առնչությամբ:

2. Որպես սույն արձանագրության Կողմերի խորհրդաժողով հանդես եկող Կողմերի համաժողովը պարբերաբար գնահատում է կամավոր վարքագծի կանոնների, ուղեցույցների եւ լավագույն գործելակերպերի եւ (կամ) ստանդարտների օգտագործումը եւ դիտարկում է վարքագծի հատուկ կանոնների, ուղեցույցների եւ լավագույն գործելակերպերի եւ (կամ) ստանդարտների ընդունման հնարավորությունը:

Հոդված

21

ԻՐԱԶԵԿՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄԸ

Յուրաքանչյուր Կողմ միջոցներ է ձեռնարկում գենետիկական պաշարների եւ գենետիկական պաշարներին առնչվող ավանդական գիտելիքների, ինչպես նաեւ հասանելիության եւ օգուտների համօգտագործմանն առնչվող հարցերի կարեւորության վերաբերյալ իրազեկության բարձրացման համար: Այդ միջոցները կարող են մասնավորապես ներառել հետեւյալը.

ա) սույն արձանագրության խթանում, ներառյալ՝ դրա նպատակը.

բ) բնիկ եւ տեղական համայնքների եւ համապատասխան շահագրգիռ կողմերի հանդիպումների կազմակերպում.

գ) բնիկ եւ տեղական համայնքների եւ համապատասխան շահագրգիռ կողմերի համար տեղեկատու ծառայության ստեղծում եւ ապահովում.

դ) տեղեկատվության տարածում ազգային տեղեկատվական կենտրոնի միջոցով.

ե) կամավոր վարքագծի կանոնների, ուղեցույցների եւ լավագույն գործելակերպերի եւ (կամ) ստանդարտների խթանում՝ բնիկ եւ տեղական համայնքների եւ համապատասխան շահագրգիռ կողմերի համաձայնությամբ եւ մասնակցությամբ.

զ) ըստ անհրաժեշտության՝ ներպետական, տարածաշրջանային եւ միջազգային փորձի փոխանակման խթանում.

է) գենետիկական պաշարների եւ գենետիկական պաշարներին առնչվող ավանդական գիտելիքների մատակարարների եւ օգտագործողների կրթում եւ վերապատրաստում՝ հասանելիության եւ օգուտների համօգտագործման մասով իրենց պարտավորությունների վերաբերյալ.

ը) բնիկ եւ տեղական համայնքների եւ համապատասխան շահագրգիռ կողմերի ներգրավում սույն արձանագրության իրականացման գործում, եւ

թ) բնիկ եւ տեղական համայնքների համայնքային աշխատակարգերի եւ ընթացակարգերի վերաբերյալ իրազեկության բարձրացում:

Հոդված

22

ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Կողմերը համագործակցում են կարողությունների ստեղծման, կարողությունների զարգացման եւ մարդկային ռեսուրսների ու ինստիտուցիոնալ

կարողությունների ամրապնդման ուղղությամբ՝ զարգացող երկրներ հանդիսացող Կողմերում, մասնավորապես՝ առավել թույլ զարգացած երկրներում եւ դրանց շարքին դասվող զարգացող փոքր կղզի-պետություններում եւ անցումային տնտեսությամբ Կողմերում սույն արձանագրությունն արդյունավետ իրականացնելու նպատակով, այդ թվում՝ առկա համաշխարհային, տարածաշրջանային, ենթատարածաշրջանային եւ ազգային հաստատությունների եւ կազմակերպությունների միջոցով: Այս համատեքստում Կողմերը պետք է նպաստեն բնիկ եւ տեղական համայնքների եւ համապատասխան շահագրգիռ կողմերի, այդ թվում՝ հասարակական կազմակերպությունների եւ մասնավոր հատվածի ներգրավմանը:

2. Զարգացող երկրներ հանդիսացող Կողմերի, մասնավորապես՝ առավել թույլ զարգացած երկրների եւ դրանց շարքին դասվող զարգացող փոքր կղզի-պետությունների եւ անցումային տնտեսությամբ Կողմերի՝ ֆինանսական ռեսուրսների հետ կապված կարիքները, Կոնվենցիայի համապատասխան դրույթների համաձայն, պետք է ամբողջությամբ հաշվի առնվեն սույն արձանագրության իրականացման նպատակով կարողությունների ստեղծման եւ զարգացման համար:

3. Որպես սույն արձանագրության իրականացման առնչությամբ համապատասխան միջոցների ձեռնարկման հիմք՝ զարգացող երկրներ հանդիսացող Կողմերը, մասնավորապես՝ առավել թույլ զարգացած երկրները եւ դրանց շարքին դասվող զարգացող փոքր կղզի-պետությունները եւ անցումային տնտեսությամբ Կողմերը պետք է սահմանեն իրենց երկրներում անհրաժեշտ ու առաջնահերթ կարողությունները՝ իրենց երկրներում կարողությունների ինքնագնահատման միջոցով: Ընդ որում, այդ Կողմերը պետք է աջակցություն ցուցաբերեն բնիկ եւ տեղական համայնքների եւ համապատասխան շահագրգիռ կողմերի՝ իրենց կողմից սահմանված անհրաժեշտ ու առաջնահերթ կարողություններին՝ շեշտադրելով կանանց անհրաժեշտ ու առաջնահերթ կարողությունները:

4. Նպաստելով սույն արձանագրության իրականացմանը՝ կարողությունների ստեղծումը եւ զարգացումը կարող են ուղղված լինել մասնավորապես հետեւյալ առանցքային ոլորտներին.

ա) սույն արձանագրությունն իրականացնելու եւ դրանով սահմանված պարտավորությունները կատարելու կարողություններ,

բ) փոխհամաձայնեցված պայմանների շուրջ բանակցություններ վարելու կարողություններ,

գ) հասանելիության եւ օգուտների համօգտագործման մասին ներպետական օրենսդրական, վարչական կամ քաղաքական միջոցների մշակման, իրականացման եւ կատարման ապահովման կարողություններ, եւ

դ) երկրների՝ իրենց ներքին հետազոտական հնարավորությունները զարգացնելու կարողություններ՝ իրենց սեփական գենետիկական պաշարները արժեւորելու համար:

5. Վերը նշված 1-4-րդ կետերի համաձայն սահմանված միջոցները կարող են մասնավորապես ներառել հետեւյալը.

ա) իրավական եւ ինստիտուցիոնալ զարգացում,

բ) բանակցություններում հավասարության եւ արդարության խթանում, օրինակ՝ փոխհամաձայնեցված պայմանների շուրջ բանակցություններ վարելու վերապատրաստում,

գ) համապատասխանության մոնիթորինգ եւ ապահովում,

դ) առկա լավագույն հաղորդակցության գործիքների եւ ինտերնետային համակարգերի օգտագործում՝ հասանելիության եւ օգուտների համօգտագործման հետ կապված գործողությունների համար,

ե) արժեւորման մեթոդների մշակում եւ օգտագործում,

զ) կենսահետախուզություն, հարակից հետազոտություններ եւ տաքսոնոմիական ուսումնասիրություններ,

է) տեխնոլոգիաների փոխանցում, ինչպես նաեւ ենթակառուցվածքի եւ տեխնիկական կարողությունների ստեղծում՝ այդ տեխնոլոգիաների փոխանցման կայունությունն ապահովելու համար,

ը) կենսաբանական բազմազանության պահպանման եւ դրա բաղադրիչների կայուն օգտագործման գործում հասանելիությանը եւ օգուտների համօգտագործմանն ուղղված գործողությունների ներդրման ավելացում,

թ) հատուկ միջոցառումներ՝ համապատասխան շահագրգիռ կողմերի՝ հասանելիության եւ օգուտների համօգտագործման հետ կապված կարողություններն ընդլայնելու համար, եւ

ժ) բնիկ եւ տեղական համայնքների կարողություններն ընդլայնելու հատուկ միջոցառումներ՝ այդ համայնքներում գենետիկական պաշարների եւ (կամ) գենետիկական պաշարների հետ կապված ավանդական գիտելիքների հասանելիության ապահովման մասով կանանց կարողությունների ընդլայնման շեշտադրմամբ:

6. Վերը նշված 1-5-րդ կետերի համաձայն՝ ազգային, տարածաշրջանային եւ միջազգային մակարդակներում կարողությունների ստեղծման եւ զարգացման նախաձեռնությունների վերաբերյալ տեղեկատվությունը պետք է տրամադրվի Հասանելիության եւ օգուտների համօգտագործման հարցերով տեղեկատվական կենտրոնին՝ հասանելիության եւ օգուտների համօգտագործման համար կարողությունների ստեղծման եւ զարգացման մասով համագործակցությունն ու համակարգումը խթանելու նպատակով:

Հոդված

23

ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՓՈԽԱՆՑՈՒՄԸ, ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Կոնվենցիայի 15-րդ, 16-րդ, 18-րդ եւ 19-րդ հոդվածներին համապատասխան՝ Կողմերը փոխգործակցում եւ համագործակցում են տեխնիկական եւ գիտական հետազոտությունների եւ զարգացման ծրագրերի շրջանակներում, ներառյալ՝ կենսատեխնոլոգիական հետազոտական գործունեությունը, որպես սույն արձանագրության նպատակին հասնելու միջոց: Կողմերը պարտավորվում են խթանել եւ խրախուսել տեխնոլոգիաների հասանելիությունը եւ տեխնոլոգիաների փոխանցումը զարգացող երկրներ հանդիսացող Կողմերին, մասնավորապես՝ առավել թույլ զարգացած երկրներին եւ դրանց շարքին դասվող զարգացող փոքր կղզի-պետություններին, ինչպես նաեւ անցումային տնտեսությամբ Կողմերին՝ Կոնվենցիայի եւ սույն արձանագրության նպատակներին հասնելու համար հուսալի եւ կենսունակ գիտատեխնոլոգիական բազայի զարգացման եւ ամրապնդման մասով հնարավորություններ ստեղծելու նպատակով: Հնարավորության եւ անհրաժեշտության դեպքում այդ համատեղ գործունեությունն իրականացվում է գենետիկական պաշարներ տրամադրող այն Կողմի (Կողմերի) հետ, որը (որոնք) այդ պաշարների ծագման երկիրն է (երկրներն են), կամ այն Կողմի (Կողմերի) հետ, որը (որոնք) ձեռք է (են) բերել գենետիկական պաշարներ՝ Կոնվենցիայի համաձայն:

Հոդված

24

ԿՈՂՄ ԶՀԱՆԴԻՍԱԳՈՂ ԵՐԿՐՆԵՐԸ

Կողմերը խրախուսում են Կողմ չհանդիսացող երկրներին միանալ սույն արձանագրությանը եւ համապատասխան տեղեկատվություն տրամադրել Հասանելիության եւ օգուտների համօգտագործման հարցերով տեղեկատվական կենտրոնին:

Հոդված

25

ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

1. Սույն արձանագրության իրականացման համար ֆինանսական ռեսուրսները քննարկելիս Կողմերը հաշվի են առնում Կոնվենցիայի 20-րդ հոդվածի դրույթները:

2. Կոնվենցիայի ֆինանսական մեխանիզմը սույն արձանագրության ֆինանսական մեխանիզմն է:

3. Սույն արձանագրության 22-րդ հոդվածում նշված կարողությունների ստեղծման եւ զարգացման առնչությամբ որպես սույն արձանագրության Կողմերի խորհրդաժողով հանդես եկող Կողմերի համաժողովը Կողմերի համաժողովի կողմից քննարկման համար վերը նշված 2-րդ կետում նշված ֆինանսավորման մեխանիզմի վերաբերյալ ուղեցույցներ տրամադրելիս հաշվի է առնում զարգացող երկրներ հանդիսացող Կողմերի, մասնավորապես՝ առավել թույլ զարգացած երկրների եւ դրանց շարքին դասվող զարգացող փոքր կղզի-պետությունների եւ անցումային տնտեսությամբ Կողմերի՝ ֆինանսական ռեսուրսների հետ կապված կարիքները, ինչպես նաեւ բնիկ եւ տեղական համայնքների, այդ թվում՝ այդ համայնքներում կանանց անհրաժեշտ եւ առաջնահերթ կարողությունները:

4. Վերը նշված 1-ին կետի համատեքստում Կողմերը հաշվի են առնում նաեւ զարգացող երկրներ հանդիսացող Կողմերի, մասնավորապես՝ առավել թույլ զարգացած երկրների եւ դրանց շարքին դասվող՝ զարգացող փոքր կղզի-պետությունների եւ անցումային տնտեսությամբ Կողմերի կարիքները՝ սույն արձանագրության իրականացման նպատակով կարողությունների ստեղծման եւ զարգացման իրենց կարիքները սահմանելու եւ իրականացնելու իրենց ջանքերում:

5. Կոնվենցիայի ֆինանսական մեխանիզմի ուղեցույցները, որոնք պարունակվում են Կողմերի համաժողովի համապատասխան որոշումներում, ներառյալ՝ սույն արձանագրության ընդունումից առաջ համաձայնեցված որոշումները, համապատասխան փոփոխություններով կիրառվում են սույն հոդվածի դրույթների առնչությամբ:

6. Զարգացած երկրներ հանդիսացող Կողմերը կարող են նաեւ տրամադրել, իսկ զարգացող երկրներ հանդիսացող Կողմերը եւ անցումային տնտեսությամբ Կողմերը կարող են օգտվել ֆինանսական եւ այլ ռեսուրսներից՝ երկկողմ, տարածաշրջանային եւ բազմակողմ ուղիներով՝ սույն արձանագրության դրույթներն իրականացնելու համար:

Հոդված

26

ՈՐՊԵՍ ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԵՐԻ ԽՈՐՀՐԱԺՈՂՈՎ ՀԱՆԴԵՍ ԵԿՈՂ ԿՈՂՄԵՐԻ ՀԱՄԱԺՈՂՈՎ

1. Կողմերի համաժողովը հանդես է գալիս որպես սույն արձանագրության Կողմերի խորհրդաժողով:

2. Կոնվենցիայի այն Կողմերը, որոնք սույն արձանագրության Կողմ չեն հանդիսանում, կարող են որպես դիտորդ մասնակցել որպես սույն

արձանագրության Կողմերի խորհրդաժողով հանդես եկող Կողմերի համաժողովի ցանկացած նիստի աշխատանքներին: Այն դեպքում, երբ Կողմերի համաժողովը հանդես է գալիս որպես սույն արձանագրության Կողմերի խորհրդաժողով, սույն արձանագրության շրջանակներում որոշումներն ընդունվում են միայն սույն արձանագրության Կողմերի կողմից:

3. Այն դեպքում, երբ Կողմերի համաժողովը հանդես է գալիս որպես սույն արձանագրության Կողմերի խորհրդաժողով, Կողմերի համաժողովի բյուրոյի ցանկացած անդամ, որը ներկայացնում է Կոնվենցիայի Կողմը, բայց այդ պահին չի հանդիսանում սույն արձանագրության Կողմ, փոխարինվում է սույն արձանագրության Կողմերի կողմից եւ իրենց կազմից ընտրված անդամով:

4. Որպես սույն արձանագրության Կողմերի խորհրդաժողով հանդես եկող Կողմերի համաժողովը կանոնավոր կերպով հետետում է սույն արձանագրության իրականացմանը եւ իր մանդատի շրջանակներում ընդունում է արձանագրության արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ որոշումներ: Այն իրականացնում է սույն արձանագրությամբ իրեն վերապահված գործառույթները, ինչպես նաեւ՝

ա) առաջարկություններ է անում սույն արձանագրության իրականացման համար անհրաժեշտ ցանկացած հարցի վերաբերյալ,

բ) ստեղծում է այնպիսի օժանդակ մարմիններ, որոնք անհրաժեշտ են համարվում սույն արձանագրության իրականացման համար,

գ) պահանջում եւ անհրաժեշտության դեպքում օգտագործում է իրավասու միջազգային կազմակերպությունների, միջկառավարական եւ հասարակական մարմինների ծառայությունները եւ համագործակցությունը եւ դրանց տրամադրած տեղեկատվությունը,

դ) սահմանում է սույն արձանագրության 29-րդ հոդվածին համապատասխան ներկայացման ենթակա տեղեկատվության փոխանցման ձեւը եւ պարբերականությունը եւ քննարկում է այդ տեղեկատվությունը, ինչպես նաեւ ցանկացած օժանդակ մարմնի կողմից ներկայացվող հաշվետվությունները,

ե) քննարկում եւ, ըստ անհրաժեշտության, ընդունում է սույն արձանագրության եւ դրա հավելվածի փոփոխությունները, ինչպես նաեւ սույն արձանագրության ցանկացած լրացուցիչ հավելված, որն անհրաժեշտ է համարվում սույն արձանագրության իրականացման համար, եւ

զ) իրականացնում է այլ գործառույթներ, որոնք կարող են պահանջվել սույն արձանագրության իրականացման համար:

5. Կողմերի համաժողովի կանոնակարգը եւ Կոնվենցիայի ֆինանսական կանոնները համապատասխան փոփոխություններով կիրառվում են սույն արձանագրության շրջանակներում՝ բացառությամբ այն դեպքերի, երբ որպես սույն արձանագրության Կողմերի խորհրդաժողով հանդես եկող Կողմերի համաժողովի կոնսենսուսով կարող է ընդունվել այլ որոշում:

6. Որպես սույն արձանագրության Կողմերի խորհրդաժողով հանդես եկող Կողմերի համաժողովի առաջին նիստը հրավիրվում է Քարտուղարության կողմից եւ անցկացվում է Կողմերի համաժողովի առաջին նիստի հետ միաժամանակ, որը, ըստ ժամանակացույցի, նախատեսված է սույն արձանագրությունն ուժի մեջ մտնելու օրվանից հետո: Որպես սույն արձանագրության Կողմերի խորհրդաժողով հանդես եկող Կողմերի համաժողովի հետագա հերթական նիստերն անցկացվում են Կողմերի համաժողովի հերթական նիստերի հետ միաժամանակ, եթե որպես սույն արձանագրության Կողմերի խորհրդաժողով հանդես եկող Կողմերի համաժողովն այլ որոշում չի ընդունում:

7. Որպես սույն արձանագրության Կողմերի խորհրդաժողով հանդես եկող Կողմերի համաժողովի արտահերթ նիստերն անցկացվում են այն ժամանակ, երբ դա կարող է անհրաժեշտ համարել որպես սույն արձանագրության Կողմերի խորհրդաժողով հանդես եկող Կողմերի համաժողովը, կամ որեւէ կողմի գրավոր պահանջի հիման վրա՝ պայմանով, որ այդ պահանջի մասին Քարտուղարության կողմից Կողմերին հաղորդելուց հետո վեց ամսվա ընթացքում այն կստանա Կողմերի առնվազն մեկ երրորդի աջակցությունը:

8. Միավորված ազգերի կազմակերպությունը, դրա մասնագիտացված գործակալությունները եւ Ատոմային էներգիայի միջազգային գործակալությունը, ինչպես նաեւ ՄԱԿ-ի ցանկացած անդամ կամ դիտորդ պետություն, որը Կոնվենցիայի Կողմ չէ, կարող են որպես դիտորդ ներկայացվել որպես սույն արձանագրության Կողմերի խորհրդաժողով հանդես եկող Կողմերի համաժողովի նիստերին: Ցանկացած մարմին կամ գործակալություն՝ ազգային թե միջազգային, պետական թե հասարակական, որն իրավասու է սույն արձանագրության շրջանակներում ընդգրկված հարցերում եւ Քարտուղարությանը տեղեկացրել է որպես սույն արձանագրության Կողմերի խորհրդաժողով հանդես եկող Կողմերի համաժողովի նիստին որպես դիտորդ ներկայացվելու իր ցանկության մասին, կարող է ստանալ դրա թույլատվությունը, եթե ներկա Կողմերի առնվազն մեկ երրորդը չի առարկում դրա դեմ: Եթե սույն հոդվածում այլ բան նախատեսված չէ, դիտորդների ընդունումն ու մասնակցությունը կարգավորվում են վերոնշյալ 5-րդ կետում նշված կանոնակարգով:

Հոդված

27

ՕԺԱՆԴԱԿ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

1. Կոնվենցիայի հիման վրա կամ դրա շրջանակներում ստեղծված ցանկացած օժանդակ մարմին կարող է սպասարկել սույն արձանագրությունը, այդ թվում՝ որպես սույն արձանագրության Կողմերի խորհրդաժողով հանդես եկող Կողմերի համաժողովի որոշմամբ: Ցանկացած այդպիսի որոշման մեջ հստակ սահմանվում են կատարման ենթակա առաջադրանքները:

2. Կոնվենցիայի այն Կողմերը, որոնք սույն արձանագրության Կողմ չեն հանդիսանում, կարող են որպես դիտորդ մասնակցել ցանկացած այդպիսի օժանդակ մարմնի ցանկացած խորհրդակցության աշխատանքների: Երբ Կոնվենցիայի օժանդակ մարմինը հանդես է գալիս որպես սույն

արձանագրության օժանդակ մարմին, սույն արձանագրության շրջանակներում որոշումներն ընդունում են միայն սույն արձանագրության Կողմերը:

3. Այն դեպքում, երբ Կոնվենցիայի օժանդակ մարմինն իրականացնում է իր գործառույթները սույն արձանագրությանն առնչվող հարցերով, այդ օժանդակ մարմնի բյուրոյի ցանկացած անդամ, որը ներկայացնում է Կոնվենցիայի Կողմը, բայց այդ պահին չի հանդիսանում սույն արձանագրության Կողմ, փոխարինվում է սույն արձանագրության Կողմերի կողմից եւ իրենց կազմից ընտրված անդամով:

Հոդված

28

ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Կոնվենցիայի 24-րդ հոդվածին համապատասխան ստեղծված Քարտուղարությունը հանդես է գալիս որպես սույն արձանագրության քարտուղարություն:

2. Կոնվենցիայի 24-րդ հոդվածի 1-ին կետը, որը վերաբերում է Քարտուղարության գործառույթներին, համապատասխան փոփոխություններով կիրառվում է սույն արձանագրության առնչությամբ:

3. Սույն արձանագրության համար քարտուղարության ծառայությունների դիմաց ծախսերը փոխհատուցվում են Կողմերի կողմից այն չափով, որքանով դրանք տարբերակվում են մյուս ծախսերից: Որպես սույն արձանագրության Կողմերի խորհրդաժողով հանդես եկող Կողմերի համաժողովն իր առաջին նիստին որոշում է ընդունում այդ նպատակով անհրաժեշտ բյուջետային միջոցների մասին:

Հոդված

29

ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

Յուրաքանչյուր Կողմ իրականացնում է սույն արձանագրությամբ ստանձնած իր պարտավորությունների կատարման մոնիթորինգ եւ որպես սույն արձանագրության Կողմերի խորհրդաժողով հանդես եկող Կողմերի համաժողովի կողմից սահմանվող պարբերականությամբ եւ ձեւաչափով սույն արձանագրության իրականացման համար իր կողմից ձեռնարկված միջոցների մասին հաշվետվություն է ներկայացնում որպես սույն արձանագրության Կողմերի խորհրդաժողով հանդես եկող Կողմերի համաժողովին:

Հոդված

30

ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՄԱՆԸ ՆՊԱՍՏՈՂ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐՆ ՈՒ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

Որպես սույն արձանագրության Կողմերի խորհրդաժողով հանդես եկող Կողմերի համաժողովն իր առաջին նիստին քննարկում եւ հաստատում է համագործակցության ընթացակարգերը եւ ինստիտուցիոնալ մեխանիզմները՝ սույն արձանագրության դրույթների կատարմանը նպաստելու եւ անհամապատասխանության դեպքերը կարգավորելու համար: Այս ընթացակարգերն ու մեխանիզմները ներառում են անհրաժեշտության դեպքում խորհրդատվություն կամ օգնություն տրամադրելու վերաբերյալ դրույթներ: Դրանք կիրառվում են Կոնվենցիայի 27-րդ հոդվածի համաձայն սահմանված՝ վեճերի կարգավորման ընթացակարգերից եւ մեխանիզմներից անկախ եւ առանց դրանք խախտելու:

Հոդված

31

ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ ՎԵՐԱՆԱՅՈՒՄԸ

Որպես սույն արձանագրության Կողմերի խորհրդաժողով հանդես եկող Կողմերի համաժողովը սույն արձանագրությունն ուժի մեջ մտնելուց չորս տարի հետո եւ այդ պահից ի վեր որպես սույն արձանագրության Կողմերի խորհրդաժողով հանդես եկող Կողմերի համաժողովի կողմից սահմանված պարբերականությամբ իրականացնում է սույն արձանագրության արդյունավետության գնահատում:

Հոդված

32

ՍՏՈՐԱԳՐՈՒՄԸ

Սույն արձանագրությունը բաց է Կոնվենցիայի Կողմերի կողմից ստորագրման համար Նյու Յորք քաղաքում գտնվող Միավորված ազգերի կազմակերպության կենտրոնակայանում 2011 թվականի փետրվարի 2-ից մինչեւ 2012 թվականի փետրվարի 1-ը:

Հոդված

33

ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ

1. Սույն արձանագրությունն ուժի մեջ է մտնում Կոնվենցիայի Կողմ հանդիսացող պետությունների կամ տնտեսական ինտեգրման տարածաշրջանային կազմակերպությունների կողմից վավերացման, ընդունման, հաստատման կամ միանալու վերաբերյալ հիսուներորդ փաստաթուղթն ի պահ հանձնվելու օրվանից հետո իննսուներորդ օրը:

2. Սույն արձանագրությունն ուժի մեջ է մտնում այն պետության կամ տնտեսական ինտեգրման տարածաշրջանային կազմակերպության համար, որը վավերացնում, ընդունում, հաստատում է սույն արձանագրությունը կամ միանում է դրան վերոհիշյալ 1-ին կետում նշված հիսուներորդ փաստաթուղթն ի պահ հանձնելուց հետո՝ այդ պետության կամ տնտեսական ինտեգրման տարածաշրջանային կազմակերպության կողմից վավերացման, ընդունման, հաստատման կամ միանալու վերաբերյալ իր փաստաթուղթն ի պահ հանձնելու օրվանից հետո իննսուներորդ օրը կամ այն օրը, երբ Կոնվենցիան ուժի մեջ է մտնում այդ պետության կամ տնտեսական ինտեգրման տարածաշրջանային կազմակերպության համար՝ կախված նրանից, թե որն է ավելի ուշ:

3. Վերոհիշյալ 1-ին եւ 2-րդ կետերի նպատակների համար տնտեսական ինտեգրման տարածաշրջանային կազմակերպության կողմից ի պահ հանձնված փաստաթղթերից ոչ մեկը չի համարվում այդ կազմակերպության անդամ պետությունների կողմից ի պահ հանձնված փաստաթղթերին լրացնող փաստաթուղթ:

Հոդված

34

ՎԵՐԱՊԱՀՈՒՄՆԵՐԸ

Սույն արձանագրության մասով վերապահումներ չեն կարող արվել:

Հոդված

35

ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՈՒՐՍ ԳԱԼԸ

1. Կողմի համար սույն արձանագրությունն ուժի մեջ մտնելու օրվանից երկու տարի հետո այդ Կողմը կարող է ցանկացած ժամանակ դուրս գալ Արձանագրությունից՝ ավանդապահին ուղարկելով գրավոր ծանուցում:

2. Արձանագրությունից այդ կերպ կարելի է դուրս գալ ավանդապահի կողմից այդ ծանուցումն ստանալու օրվանից մեկ տարի հետո կամ ավելի ուշ՝ դուրս գալու մասին ծանուցման մեջ նշված ամսաթվին:

Հոդված

36

ՀԱՎԱՍԱՐԱԶՈՐ ՏԵՔՍՏԵՐԸ

Սույն արձանագրության բնօրինակը, որի արաբերեն, չինարեն, անգլերեն, ֆրանսերեն, ռուսերեն եւ իսպաներեն տեքստերը հավասարազոր են, ի պահ է հանձնվում Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր քարտուղարին:

Ի վկայություն վերոշարադրյալի՝ պատշաճ կերպով լիազորված ներքոստորագրյալները ստորագրեցին սույն արձանագրությունը նշված ամսաթվերին:

Կատարված է Նագոյայում երկու հազար տասը թվականի հոկտեմբերի քսանինին:

Հավելված

ԴՐԱՄԱԿԱՆ ԵՎ ՈՉ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՈՒՏՆԵՐԸ

1. Դրամական օգուտները կարող են ներառել, սակայն սահմանափակված չլինել հետեւյալով.

ա) հավաքված կամ այլ կերպ ձեռք բերված յուրաքանչյուր նմուշի հասանելիության վճարներ/վճար.

բ) կանխավճարներ.

գ) փուլային վճարումներ.

դ) ռոյալթիների վճարում.

ե) լիցենզավորման վճարներ՝ առետրայնացման դեպքում.

զ) հատուկ վճարներ, որոնք վճարվում են կենսաբազմազանության պահպանմանն ու կայուն օգտագործմանն աջակցող հավատարմագրային հիմնադրամներին.

է) աշխատավարձեր եւ արտոնյալ պայմաններ՝ փոխհամաձայնեցված դեպքերում.

ը) գիտական հետազոտությունների ֆինանսավորում.

թ) համատեղ ձեռնարկություններ.

ժ) համապատասխան մտավոր սեփականության նկատմամբ համատեղ սեփականության իրավունքներ:

2. Ոչ դրամական օգուտները կարող են ներառել, սակայն սահմանափակված չլինել հետեւյալով.

ա) գիտական հետազոտությունների եւ մշակումների արդյունքների փոխանակում.

բ) փոխգործակցություն, համագործակցություն եւ ներդրում գիտական հետազոտությունների եւ մշակումների ծրագրերում, հատկապես՝ կենսատեխնոլոգիական հետազոտական գործունեության մեջ, հնարավորության դեպքում՝ գենետիկ պաշարներ տրամադրող Կողմում.

գ) մասնակցություն արտադրանքի մշակմանը.

դ) փոխգործակցություն, համագործակցություն եւ ներդրում կրթության եւ վերապատրաստման գործում.

ե) տարածքից դուրս գտնվող՝ գենետիկական պաշարների պահեստներ եւ տվյալների բազաներ մուտք գործելու իրավունք.

զ) գենետիկական պաշարների մատակարարին գիտելիքների ու տեխնոլոգիաների փոխանցում արդար եւ առավել շահավետ պայմաններով, այդ թվում՝ համաձայնեցման դեպքում՝ արտոնյալ պայմաններով, մասնավորապես՝ գենետիկ պաշարների օգտագործմանն առնչվող գիտելիքների ու տեխնոլոգիաների, ներառյալ՝ կենսատեխնոլոգիան, կամ կենսաբանական բազմազանության պահպանմանը եւ կայուն օգտագործմանն առնչվող գիտելիքների ու տեխնոլոգիաների փոխանցում.

է) տեխնոլոգիաների փոխանցման նպատակով կարողությունների ամրապնդում.

ը) ինստիտուցիոնալ կարողությունների ստեղծում.

թ) մարդկային եւ նյութական պաշարներ՝ հասանելիության կարգավորումները բաշխելու եւ կատարելու համար կարողություններն ամրապնդելու նպատակով.

ժ) գենետիկական պաշարների հետ կապված վերապատրաստումներ՝ գենետիկական պաշարներ տրամադրող երկրների լիակատար մասնակցությամբ եւ հնարավորության դեպքում՝ այդ երկրներում.

Ժա) կենսաբանական բազմազանության պահպանմանն ու կայուն օգտագործմանը վերաբերող գիտական տեղեկատվության հասանելիություն, ներառյալ՝ կենսաբանական ինվենտարիզացիաները եւ տաքսոնոմիական ուսումնասիրությունները.

Ժբ) ներդրումներ տեղական տնտեսության մեջ.

Ժգ) հետազոտություններ, որոնք ուղղված են առաջնային կարիքների բավարարմանը, ինչպիսիք են առողջապահությունը եւ պարենային անվտանգությունը՝ հաշվի առնելով գենետիկական պաշարների ներքին օգտագործումը գենետիկական պաշարներ տրամադրող Կողմում.

Ժդ) ինստիտուցիոնալ եւ մասնագիտական հարաբերություններ, որոնք կարող են ծագել գենետիկական պաշարների հասանելիության եւ օգուտների համօգտագործման համաձայնագրից եւ հետագա համատեղ գործունեության արդյունքում.

Ժե) սննդի անվտանգության եւ կենսաապահովման օգուտներ.

Ժզ) հանրային ճանաչում.

Ժէ) համապատասխան մտավոր սեփականության նկատմամբ համատեղ սեփականության իրավունքներ: